№ 138 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 27 1901 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 27 № 138

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ ազգ. օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐՈՒՊՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վիրաւորական գործողութիւն. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ջրի հարցը Բագուում. Նամակ Ախալքալաքից. Նամակ Գանձակից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Իտալիայում.

ՎԻՐԱՒՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

—

Երբ որ մի գողութիւն է տեղի ունենում գործարաններում, կառավարիչները շատ անգամ խուզարկութեան են ենթարկում բոլոր բանւորներին գողացած իրը գտնելու համար: Խուզարկութիւնը գուցէ երբեմն նպաստում է գտնելու որոնածը, բայց, ինչպէս ցոյց է տալիս փորձը, մեծ մասամբ նա չէ տալիս դրական հետեւանքներ՝ գողացածը չէ գտնվում: Մինչդեռ ինքը խուզարկութիւնը, իբրեւ մի գործողութիւն, շատ վիրաւորական եւ ստորացուցիչ մի ձեւ է, որի դէմ վաղուց բողոքում է աշխատող դասակարգը:

Արդարեւ մի գործարանում, ուր կան մի երեք հազար բանւոր, ինչու պէտք է խուզարկութեան ենթարկվեն երեք հազար անձինք մի քանի արատաւոր եւ յանցաւոր սրիկաների պատճառով: Ինչո՞ւ իրանց պատւով, նամուսով աշխատող անձինք պէտք է կասկածի ենթարկվեն բացառիկ անձնաւորութիւնների շնորհիւ: Էլ ո՞ւր մնաց մարդու արժանաւորութիւնը, նրա տան անձեռնմխելիութիւնը: Իսկ բանւորների մէջ շատ կան անձինք, որոնք շատ դիւրազգաց են դէպի պատուի խնդիրները եւ խորապէս վիրաւորվում են այնպիսի վարմունքներից, երբ նրանց վրա նայում են իբրեւ յանցանքի ընդունակ անձանց վրա:

Խուզարկութիւնը ոչ թէ չէ հասնում իր դիտաւորեալ նպատակին, այլ յաճախ նա առաջ է բերում զայրոյթ եւ ոչ ցանկալի զգացմունքներ ու այդպիսով առաջ է բերում բոլորովին հակառակ հետեւանքներ:

Մի յատուկ յանձնաժողովում, որ կայացաւ մի շաբաթ առաջ Մոսկվայում, քննութեան ենթարկվեց խուզարկութիւնները կատարելու հարցը: Նոյն իսկ գործարանատէրերի շրջանից եղան բողոքող անձինք, որոնք ցոյց տուին այդ գործողութեան վատ կողմերը: Մոսկվայի յայտնի գործարանատէր Լիսա, Միտիշչի վագոն շինող գործարանը, Պետերբուրգի Սիմէնս և Գալսկէի գործարանը արդէն ոչնչացրել են խուզարկութիւնը իրանց աշխատաւորների շրջանում, գործարանատէր Պրօխօրով խոստացել է նոյնպէս այս օրերս կարգադրել, որ խուզարկութիւն այլ ևս չը կատարվի նրա բանւորների մէջ:

Ոչնչացնելով խուզարկութիւնը, գործարանատէրերը պէտք է գողութեան դէմ մաքառեն, աւելացնելով հսկողութիւնը մեքենաների և մթերքների վրա թէ գործի ժամանակ և թէ մանաւանդ ոչ օրերում: բացի այդ նրանք պէտք է շինեն բանւորների համար յատուկ տեղեր շորեր հանելու, լուացվելու համար և այդպիսով բանելու տեղը անջատեն այն տեղերից, ուր հագնվում են բանւորները և հեշտութեամբ կարող են իրեր թագցնել շորերի մէջ:

Խուզարկութեան դէմ բողոքը վաղուց է յարուցված և ուրախալի է, որ իրանք գործարանատէրերը սկսել են զգալ նրա անյարմարութիւնը և իրանք իրանց նախաձեռնութեամբ նրան ոչնչացնում են: Ժամանակ է, որ այդ տգեղ և վիրաւորական բանը ընդհանրապէս վերացվէր բոլոր գործարաններում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՋՐԻ ՀԱՐՑԸ ԲԱԳԻՈՒՄ

—

Քանի տարուց աւելի է, որ Բագուն խմելու մաքուր ջրի պէտք է զգում: Չը նայած այդ «պատկառելի» ժամանակամիջոցին, այսօր այնու ամենայնիւ նոյն պէտքն է զգացվում աւելի սաստիկ եւ սոսկալի կերպով:

Բնակիչների թիւը տարէց տարի աւելանում, բազմապատկվում է, այսօր մօտ երկու հարիւր հազար բնակիչ է հաշւում, սակայն այդ կենսական անհրաժեշտ պիտոյքի հարցը դարձեալ «հարց» է մնում: Շատ անգամ է դումայի խօսակցութեան նիւթ դարձել, շատ որոշումներ են կայացել, յատուկ մասնաժողովներ այդ մասին շատ են ընտրվել, շատ ծրագրեր, նախագծեր են կազմվել, շատ առաջարկութիւններ են տեղի ունեցել, բայց ոչ մի բաւարար եւ նպատակայարմար հետեւանք: Այսօր Բագուի երկու հարիւր հազարի չափ բնակչութիւնը դատապարտված է իր ծարաւը յագեցնել կամ քաղցրացնող միջոցով ստացած ծովի տաք, անհամ եւ գարշահոտ ջրով եւ կամ հորերից ստացած աղի եւ հազար ու մի վնասակար բաղադրութիւն ունեցող ջրերով...

Սակայն այդ արդէն դատապարտելի է: Ունենալ ինտելիգէնտ ձայնաւորներ, բազմաթիւ տեսակ-տեսակ մասնագէտներ՝ գէօլօգներ, քիմիկոսներ, ինժեներներ եւ վերջապէս ունենալ միջոց, հնարաւորութիւն, փող,—եւ լուրջ կերպով հոգ չը տանել, չը ձեռնարկել հիմնաւոր կերպով այնպիսի մի անհրաժեշտ եւ օգտակար գործ, ինչպէս է առողջարար, մաքուր ջուր մատակարարելը, այդ, ի հարկէ, աւելի քան յանցանք է...

Հէնց այդ, հաւանականօրէն, զգացումից դրդված՝ վերջին տարիներս Բագուն իր յոյսը ուղղել է դէպի արտասահման եւ այնտեղից է սպասում իր անլուծելի դարձած հարցի լուծումը:

Հրաւիրվել է յայտնի ինժենէր Լինդլէյ, որը Ֆրանկֆուրտում (Մայնի վրա) եւ ուրիշ քաղաքներում ունի յայտնի ջրանցքներ իր սեպհական նախագծերով շինած: Թէեւ բաւական ժամանակ է անցել այն օրից, երբ Լինդլէյ համաձայնութիւն է տուել երկու նախագիծ կազմելու՝ Կուր եւ Սամուր գետերից դէպի Բագու ջուր տանելու համար, բայց դեռ նոր է կազմում: Գործի ուշանալու մէջ, Լինդլէյի պնդելով, յանցաւորը տեղական մասնաժողովն է, իսկ վերջինիս ասելով—Լինդլէյն է մեղաւոր: Սակայն խնդիրը այդ չէ, այլ այն, որ Լինդլէյը աւելի նպատակայարմար է գտնում, որ ջուրը փոխանակ Կուր եւ Սամուր գետերից բերելու, բերվի Ղուբայի լեռներից բղխող աղբիւրներից: Լինդլէյ հաւատացած է, որ այդ աղբիւրները լաւ աղբիւրներ են եւ ունեն մեծ ջրամբար: Բայց որպէս զի դրա մէջ հաւատիանան ասենքը, որ յիրաւի այդ աղբիւրները անապառ են, նա առաջարկում է փորձ անել, ջրհորներ փորել եւ տեսնել, թէ այդ աղբիւրների ջրամբարը ինչ խորութեան եւ ինչ դրութեան մէջ է: Փորձը անելու համար հարկաւոր կը լինի ծախսել 25—30 հազար բուբլի:

Այս ասելով՝ նա, ի հարկէ, չէ առաջարկում դրանով միայն սահմանափակվել. նա կազմում է եւ Սամուրից ու Կուրից ջուր բերելու նախագծերը. բայց մի եւ նոյն ժամանակ նպատակայարմար է համարում եւ վերոյիշեալ փորձը անել: Պարզ բան է, այնտեղ, որտեղ 18—20 միլիոնի ծախք է նախատեսվում, չէ կարելի 25—30 հազարի համար կանգ առնել, տնտեսութեան հարց մէջտեղ բերել, քանի որ կարող է պատահել, որ այդ 25—30 հազարի փորձը մեծ ծառայութիւն կարող է մատուցանել քաղաքին: Մասնաժողովի անդամներից ոմանք դէմ են այդ առաջարկութեան եւ միանգամայն աւելորդ ծախք են համարում: Երէկ, ձայնաւորների ժողովի զբաղմունքի առարկաների մէջ դրված էր եւ այդ խնդիրը: Երկար վիճաբանութիւններից յետոյ՝ ժողովը, ձայնի բազմութեամբ, վճռեց չը տալ Լինդլէյի պահանջած այդ 25—30 հազար բուբլին, հետեւապէս այդ փորձը նա աւելորդ համարեց...

Ձայնաւորների այդ որոշումը յայտնվելուն պէս՝ Հաջի Զէյնալ-Աբդին Թաղիէվը, որ ներկայ չէ լինում նիստին եւ որը կողմակից է այն կարծիքին, թէ պէտք է փորձեր անել այդ աղբիւրների վերաբերեալ, իսկոյն կանչել է տալիս իր մօտ Լենդլէյին եւ խնդրում է, որ փորձերը սկսէ իր սեփական հաշւով... Ասել է, թէ Բագուի ֆիլանթրոպը, աչքի առաջ ունենալով քաղաքի շահերը—նուիրում է 25—30 հազար բուբլի:

Ն. Դաւթեան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

(Ուղեւորի թռուցիկ տպաւորութիւններ)

V

Վենետիկեան գիշերը երազ է, կատարեալ երազ. Տէնն իրաւամբ է նկատել, որ «Երազելուց դուրս այստեղ անկարելի է ուրիշ բան անել»:

Սակաւաթիւ ցամաք փողոցները նեղ են, իսկ երեկոները վենետիկցին չէ սիրում յարկի տակ մնալ. հարաւային բնակիչը բաց երկնքի սիրահար է:

Նեղլիկ փողոցներից ահագին բազմութիւն է շարժվում դէպի ս. Մարկոսի հրապարակը. մարդ հազիւ է ճանապարհ գտնում: Քաղաքային երաժշտութիւնը ածում է հրապարակում առաջնակարգ վարպետների գործեր. զբօսնող բազմութիւնը խիստ մեծ է, հետաքրքիր օտարականներ են եւ անհոգ, ուրախ վենետիկցիներ:

Կեանքին եւ վայելքներին ծարաւ բազմութիւնը, որ խմբվել է այստեղ աշխարհի զանազան ծայրերից, այս երաժշտութիւնը, որ արեւելեան մի գալարուն, մի մրմնջացող շեշտ ունի իր մէջ, այս գաղջ մթնոլորտը, լապտերների փայլը, մարմարէ հինաւուրց պալատները, կանանց այս հոծ բազմութիւնը, որ վայելչաբար ամբոխի ամենաչնչին շարժումների գաղտնիքն ունի իր ձեռքին, եւ ուղղութիւն է տալիս իրարանցմանը, այս բոլորը, բոլորը միախառնվելով, ստեղծում են հոգեկան մի այնպիսի կացութիւն, որ միայն երազ բառով կարելի է արտայայտել:

Երաժշտութիւնը դադարում է ժամի 11-ին, եւ ես քայլերս ուղղում եմ դէպի ծովափ: Այստեղ տեսարանն այլ է եւ աւելի հետաքրքիր: Ուղիղ դէմ ու դէմ բարձրացող երկու գրանիտեայ սիւների միջից լրացած լուսինը թափում է հրապարակի եւ պալատների արձանագարդ ճերմակ ճակատների վրա արծաթէ շիթերի մի ծով: Ափին իրար կողքի շարված են բազմաթիւ գօնդոլներ ցցերին կապած, որպէս ձկնեղի մի վտառ, կամ յոգնած կարապների մի խումբ, որոնք, ողջ օրը ջրերը յուզելուց յոգնած, ննջում են ալիքների յեղյեղուտ երեսին իրանց խոնաւ անկողիններում: Ամեն անգամ երբ երեկոյեան թեթեւ հովի բերած ալեակները գալիս մեղմով զարկվում են գօնդոլներին, նրանք քնից արթնացածի պէս թեթեւ մրմնջում են իրանց հնչիւնով, կարծես դժգոհ, որ խռովում են իրանց գիշերային հանգիստը, օրօրվում են, քնքշաբար եւ ծոյլ ծոյլ քսվում են իրար, ապա ինչ որ քչփչում են ալիքների հետ, կարծես աղերսում են իրանց հանգիստ թողնել եւ կրկին խաղաղվում ու մնում են անշարժ. իսկ ալեակները, գոհացած իրանց չարաճճի խաղից, թեթեւ քրքիջով յետ են փախչում դէպի ծովի խորքերը, ցնցելով իրանց փոքրիկ, փրփրուն բաշերը, որպէս զի քիչ յետոյ նորից յետ գան, կրկին խռովեն գօնդոլների հանգիստը եւ կրկին յետ փախչեն նոյն ձեւով: Գօնդոլներից շատերի մէջ տէրերը ծոյլ ծոյլ ձգված են, օրօրվում են, կամ մեղմիւ երգում են ինչ որ երգ:

Հեռու, հեռու դէպի ծովի խորքը փոքրիկ գունաւոր ճրագներ են երեւվում զանազան ուղղութեամբ, եւ ապա ծածկվում են մութ ջրանցքներում: Կան այնտեղ ուրիշ լոյսեր, որոնք անշարժ են եւ փայլուն լուսապսակ են կազմում մի գօնդոլի չորս կողմը,—վենետիկեան լապտերներ են, որոնցով զարդարված է սերենադա կազմող երաժիշտների գօնդոլը: Այս տարօրինակ նուագախումբը, բաղկացած մի քանի տղամարդկանցից ու կանանցից, ծովի խաւար տարածութեան վրա կանգնած է, որպէս ջրային ոգիների մի խումբ, որ դուրս է լողացել մռայլ անդունդներից եւ նուագում է երկնքի, աստղերի, ծովի ալիքների եւ գիշերային քար լռութեան համար մի երգ՝ բուռն ու բոցոտ, գալարուն ու խրոխտ: Բայց ահա ճրագներն օրօրվեցին, գօնդոլը լողում է դէպի քաղաք, շուտով նա մտաւ մի ջրանցք եւ սերենադը գնալով գնալով մեղմացաւ եւ ի վերջոյ մեռաւ լուռ ու խաւար շէնքերի ստուերների մէջ:

Ծովը լռեց, հրապարակը դատարկվեց, պալատների եւ եկեղեցիների արձաններն այժմ ինչ որ ճնշող խորհրդաւորութիւն ստացան:

Ս. Մարկոսի զանգակատան ժամացոյցը կէս գիշեր խփեց. ես դեռ յափշտակված նայում եմ գօնդոլներին, պատառ պատառ ամպերի միջից սահող լուսնին, իտալական այս տարօրինակ երկնքին, որ այնքան մոյգ է, դքսական պալատի եւ ս. Մարկոսի արձաններին, այս գրանիտեայ բարձր սիւներին: Գիշերային խաղաղութիւնը գնալով աւելի եւ աւելի կատարեալ է դառնում, հեռու տեղի փոքրիկ ոռնաձայնն անգամ լսվում է անախորժ ճչդութեամբ: Մի տարօրինակ ցանկութիւն է ծագում իմ մէջ նստել այս գօնդոլներից մէկի մէջ եւ, եթէ հնարաւոր է, տարվել այս նիրհող ջրերի վրայով հեռու հեռու դէպի բաց ծովը եւ այնտեղից նայել այս մոգական պալատներին, ալիքների մէջ քնած այս տարօրինակ քաղաքին:

—Գօնդոլ:

—Ո՞ւր կուզէք գնալ, պարոն:

—Հեռու այս ափից, դէպի որ եւ է կողմ:

—Մեծ ջրանցքով պարոն, այն է յարմար այս ժամին:

Նա դանդաղութեամբ արձակում է նաւակը, վերցնում իր մի հատիկ թին եւ, կանգնած գօնդոլի ետեւի մասում մի եզրի վրա, իր այդ մի հատիկ թիակով եւ զեկավարում եւ առաջ է մղում այնպիսի աջողութեամբ, որ կարծես կառք է քշում: Գօնդոլը սահում է քնած ջրերի վրայով. լուռ է ջրանցքը, իմ ետեւից ես հազիւ լսում եմ թիակի բարձրացրած մեղմ ճղփիւնը եւ առջեւս տեսնում եմ ցուռկի վերայի փոքրիկ լապտերի գունաւոր լոյսը, որ լուսաւոր նետի պէս ցցվում է ջրերի մէջ:

Անցնում ենք փրկագործ Ս. Մարիամի եկեղեցու առաջից. կէս խաւար կէս լուսաւոր կամ աղօտ ուրուագծերով ջրերի միջից բարձրանում է նրա գեղեցիկ սիլուէտը, որպէս մարմարէ մի հսկայական փունջ. գմբէթի կատարին Աստուածածնի արձանը հազիւ երեւում է երկնքի ֆոնի վրա. մի վայրկեան լուսինը հէնց այդ արձանի գլխին է եւ լոյսի անձրեւով ասես ողողում է ողջ եկեղեցին:

Դէպի աջ իրար կողքի անվերջ շարքով կանգնած են ջրերի մէջ մի կարգ հին մարմարեայ պալատներ, որոնք այժմ հիւրանոցներ են վերածված բուրժուա փարթամ ճանապարհորդների ամենատեսակ վայելքների համար: Այնտեղ՝ ուր ապրում, քնում էր ոսկեհուռ բեհեզների մէջ կորած նախկին գոռոզ իշխանը, այժմ ապրում, քնում է ոսկու մէջ կորած բուրժուան. իսկ ժողովուրդը, որ իր մէջքով ու արիւնով այդ փոփոխութիւնն առաջ բերեց, նա դարձեալ անմասն մնաց կեանքի վայելքին, նա դարձեալ այս պալատներից դուրս է մնացել. նա այս գօնդոլների թիավարն է, որ այն լուսամուտներից ձգված փըշրանքներն է հաւաքում գլխաբաց:

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

—

Յունիսի 21-ին

Գաւառապետի կարգադրութեամբ, որ աղէտի միւս օրը, յունիսի 15-ին, Կարզախ գիւղից եկել էր Վաչիան, երկրաշարժի ժամանակից աւելացած բոլոր հին չորերը ուղարկեցին Վաչիան եւ բաժանեցին աղէտից վնասվածներին։ Նոյնպէս մօտ 120 պուդ ալիւր բաժանվեց, իբրեւ մի շաբաթվայ պաշար։

Վնասվածները հետեւեալ կերպով են որոշված առայժմ։

Մարդկային զոհ—երկու։ 31 տուն իրանց բոլոր մասերով ամբողջովին աւերված են. 16 տուն հաւարեա մեծ մասամբ նոյնպէս բոլորովին քանդված են, բայց քարը եւ գերանների մի մասը տեղն է. մօտ 15 տուն էլ, թէեւ կանգուն են մնացել, բայց լցված են ղիժով (մանր քար) եւ ցեխով։ Ուրեմն վնասվել են մօտ 60 տուն, որոնցից 47-ը կարօտ են հիմնովին վերաշինութեան։—Սպանված են 141 խոշոր եղջիւրաւոր անասուններ եւ 255 ոչխար, ընդամենը 396 գլուխ։ Ուրեմն վաչիանցիք զրկվեցին եւ այն կթի կովերից ու ոչխարներից, որոնք խուսափել էին մսավաճառի դանակից եւ կերակրում էին խեղճ գիւղացու երեխաներին։ Վնասը, առանց փչացած արտերը հաշուելու, պաշտօնապէս համարում են մօտ 20 հազար բուբլի. բայց, ի հարկէ, այդ գումարով չէ կարելի վերականգնել հաւարեա մի ամբողջ գիւղ։ Եթէ՝ բացի այս աղէտից՝ աչքի առաջ ունենանք, որ երկու տարի շարունակ այդ գիւղը միջաններից էր վնասվում, մի երկու ամիս առաջ էլ կայուածատէր Ղրիքիսալով, որ ահա մի քանի տարի է, որ տիրապետել է Վաչիանի հողերին, 1500 բուբլի սեղմելով առաւ,—այն ժամանակ հասկանալի կը լինի այդ գիւղի թշուառութեան աստիճանը, որը մի ժամանակ առաջին տեղն էր բռնում գաւառում իր անտեսական բարելաւ դրութեամբ։

Տեղական կոմիտեի երէկվայ նիստը ամբողջովին նուիրված էր վաչիանցիներին։ Կոմիտեը որոշեց իր ձեռքի տակ գտնվող 500 պուդ ալիւրը ամբողջովին յատկացնել վնասված վաչիանցիներին, իբրեւ մօտաւորապէս երեք շաբաթվայ պաշար. 40 հազար բուբլուց պետական փոխառութիւն տալու համար կազմած ցուցակը լրացնել նոր վնասված վաչիանցիներով եւ միջնորդել, որ նրանց էլ փոխառութիւն տրվի, եւ խնդրել գլխաւոր կոմիտեին, որ երկրաշարժից վնասվածների համար ստացած գումարներից 150—ական բուբլի օժանդակութիւն տայ տներից զրկված ամէն ծուխի, որ սրանք կարողանան վերաշինել տները։

Հեղեղին զոհ գնացած հարսի դիակը գտել են եւ համարեա ամբողջ գիւղի մասնակցութեամբ թաղել են։—Յունիսի 17-ին նոյնպէս մեծ հեղեղ պատահեց այստեղ, Վաչիանում եւ շրջակայքում. մի քանի խարխուլ տներ նոյնպէս փլվել են Վաչիանում, բայց այդ հեղեղը մեծ վնաս չը տուեց, որովհետեւ ջրի ճանապարհը արդէն բաց էր։

Կրկնում ենք, հասարակութիւնը պարտական է օգնելու բաց երկնքի տակ մնացած «անտուն, անտէր» վաչիանցիներին, որոնք երկրաշարժից յետոյ իրանք էին երկար ժամանակ պատսպարել իրանց լծակից, եղբայրակից գիւղացիներին։

Գիւղացու չափ պարտաճանաչ գանվենք, օգնենք...

Սալլիւմեան

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

—

Յունիսի 21-ին

Յունիսի 13-ին հողին յանձնեցինք Յովսէփ Շահիջանեանի մարմինը։ Հանգուցեալը մեր քաղաքի աչքի ընկնող գործունեայ երիտասարդներից մէկն էր։ Միջնակարգ ուսումն աւարտելով տեղիս գիմնազիայում, գնաց Խարկով՝ իբրեւ ուսանող բժշկական բաժնի։ Բայց, դեռ չաւարտած, թոքախտի պատճառով, երրորդ կուրսից դուրս եկաւ եւ այնուհետեւ շարունակեց ապրել իր հայրենի Գանձակում։ Զը նայելով իր հիւանդութեան, նա, այնու ամենայնիւ, մասնակցում էր տեղիս հասարակական գործերում։ Յայտնի էր իր ուղղամիտ եւ ազնիւ բնաւորութեամբ։ Մեր գաւառական չետադէմ, խաւար կեանքում, մեր նիւթապաշտ, իդէալազուրկ հասարակութեան մէջ նա կարող էր պարծենալ իր գաղափարով, որին ծառայեց մինչեւ մահը եւ որից երբէք, չը նայելով իր կեանքի մէջ յաճախ պատահող դժբաղդութիւններին եւ դառնութիւններին՝ չը հրաժարվեց։ Նրա մահով Գանձակը կորցրեց իր լաւագոյն անդամներից մէկին։

Յունիսի 19-ին տեղի ունեցաւ քաղաքային դումայի նիստը, որի ժամանակ. ի միջի այլ մանր հարցերի, խօսվեց եւ այն մասին՝ թէ արդեօք քաղաքագլուխը իրաւունք ունի առանց խորհրդի կարծիքն իմանալու զանազան չէնքերի, վերանորոգութիւնների համար նախատեսնվածից աւելի փող բաց թողնել։ Մի քանիսներն այն կարծիքը յայտնեցին՝ թէ հարկաւոր է նախապէս ժողով գումարել, ձայնաւորների կարծիքն իմանալ, ապա գործ կատարել։ Ուրիշներն էլ պնդում էին՝ թէ միշտ հնարաւորութիւն չի լինի ժողով կազմել, կարծիք իմանալ, քանի որ շուտափոյթ կարիք կարող է զգացվել կամ պատահական հրդեհի առաջն առնելու կամ յանկարծական փլուածքը նորոգելու։ Այսպիսի պարագաներում, ասում էին նրանք, անկարելի է ձեռքերը ծալել եւ սպասել ժողովի։ Որոշվեց, որ հնարաւոր եղածի չափ խորհրդի կարծիքը իմացվի, իսկ եթէ այդ ուղղակի չէ կարելի՝ այն ժամանակ միայն ձեռք առնվեն հարկաւոր միջոցները։

Երկար վիճաբանութիւն տեղի ունեցաւ նաեւ պ. քաղաքագլխի ու մի քանի ձայնաւորների մէջ այն մասին՝ թէ պէտք է արդեօք քաղաքային դեղատունը տեղաւորել յատկապէս քաղաքային հիւանդանոցի համար նուիրված տան մէջ, թէ ոչ։ Պ. քաղաքագլուխը առաջարկում էր, որ դեղատունը պահվի նուիրված տան մէջ, չը նայելով որ այդ տունը նուիրվել է ամենից առաջ այն պայմանով, որ միայն հիւանդանոցի համար գործադրվի։ Թէ ինքը նուիրատու պ. Մ. Աֆանասեան եւ թէ ձայնաւորներ՝ Ս. Աֆանասեան, Լազարեան ու բժ. Ամիրխանեան՝ չէին կամենում ընդունել այդ առաջարկը, պատճառաբանելով, որ ամենեւին կարիք չը կայ նուիրատուի ցանկութեան հակառակելու, քանի որ նրա ցանկութիւնը ոչ թէ կապրիզ է, այլ հիմնված է քաղաքի շահերի վրա, աւելի ընդարձակ եւ աւելի յարմար հիւանդանոց ունենալու պահանջի վրա։ Որոշվեց, որ դեղատունը պահվի ուրիշ չէնքի մէջ։

Յունիսի սկզբներին մեր քաղաքում ցորենի գինը բաւական էժան էր՝ պուդը 70—80 կ., բայց ճարպիկ մարդկանց առաջ բերած արհեստական թանգութեան պատճառով այժմ ծախվում է 90 կ.—1 բուբլի։ Պէտք է ասել, որ այս տարվայ բերքը յատկութեան կողմից ստոր է առայժմ, գուցէ այն պատճառով, որ գարնան սկզբներին տիրում էր անտանելի չորութիւն, երաշտութիւն, իսկ վերջերին՝ ընդհակառակը թաց, անձրեւային եղանակ։

Սիմ. Յակոբեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, յունիսի 25-ին

Նորերս տեղական վրաց թերթերը «Тифлисскій Листокъ» լրագրից հրճուանքով արտատպեցին Պետերբուրգից հաղորդած մի լուր, որը հաղորդում է, որ իբր թէ կառավարութիւնը վճռել է Թիֆլիսի Միջին-փողոցում գտնվող հայ-կաթոլիկների եկեղեցին յանձնել վրացի-կաթոլիկներին, իսկ հայ-կաթոլիկներին իրաւունք է տրվում չինել իրանց համար նոր եկեղեցի եւ Թիֆլիսում հիմնել հայ-կաթոլիկների հոգեւոր կառավարութիւն։

Այդ լուրի մէջ մի անճշտութիւն կայ։ Կառավարութիւնը վրացի-կաթոլիկներ հասարակութիւն ոչ մի դէպքում չէ ճանաչում եւ յայտնի է, որ կաթոլիկ եկեղեցիների մէջ վաղուց արդէն խստիւ արգելված է վրաց լեզուի գործածութիւնն անգամ։ Վճռված է եկեղեցին ոչ թէ յանձնել վրացի-կաթոլիկներին, ինչպէս սիալ հաղորդված է «Тифлисскій Листокъ» լրագրին Պետերբուրգից, այլ Թիֆլիսի Միջին-փողոցում գտնվող կաթոլիկ եկեղեցին՝ վերապահել լատինական-կաթոլիկներին, որոնց ձեռքում գտնվում է եւ այժմ։ Ահա ճիշդ իրողութիւնը։ Այսպէս էլ կիրակի օր, յունիսի 24-ին, պատարագից յետոյ, պաշտօնապէս յայտարարվեց նոյն եկեղեցում։

Հայ-կաթոլիկ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մենք հաղորդել էինք, որ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը ժտադիր է շուտով բանալ մսի խանութներ եւ այնտեղ վաճառել էժան գնով եւ լաւ յատկութեան միս։ Երկուշաբթի, յունիսի 25-ին, քաղաքային վարչութիւնը իր ժողովում, որին մասնակցում էին դումայի կողմից ընտրված մասնաժողովի անդամներ, որոշեց առայժմ բանալ մի խանութ Սօլդատսկի Բազար կոչված տեղում։ Խանութը պէտք է ունենայ սառցարան՝ միսն անվնաս պահելու համար։ Պատերը պէտք է լինեն քարից կամ կաֆելից շինված, որպէս զի կարելի լինի լուանալ նրան։ Միսը սպանդանոցից դէպի խանութը բերելու համար պէտք է պատուիրվեն յարմար կառքեր։

—

Երկուշաբթի, յունիսի 26-ին, կայացաւ Կովկասեան ցուցահանդէսի կարգադրիչ յանձնաժողովի նիստը, որն ընտրեց գնահատող յանձնաժողով կամ էկսպերտների կոմիսիա։ Այդ յանձնաժողովը յետոյ ինքը, յատուկ քննութեան ենթարկելով զանազան իրերի գնահատելու առանձնայատկութիւնները՝ կը մշակի մի շարք հրահանգներ, որոնցով պէտք է ղեկավարվեն գնահատողները ցուցահանդէսի ժամանակ։

—

Կովկասեան հանքային ջրերի կառավարչական կոմիսար Խվոշչինսկի, հասարակութեան մէջ «Նարզան» հանքային ջուրը տարածելու համար, բաց է անում Մոսկվայում այդ ջրի պահեստը, ամենաէժան գնով ծախելու նպատակով։ Մոսկվայի քաղաքային վարչութիւնը, ինչպէս հաղորդում է «Новое Время» լրագիրը, համակրելով այդ պահեստի նպատակներին, վճռեց Տվերսկոյ բուլվարի վրա սիւն կանգնեցնել՝ կովկասեան ջրերի մասին յայտարարութեամբ։

—

Յունիսի 23-ին եւ 24-ին տեղի ունեցան Պրավդինի խմբի վերջին երկու ներկայացումները, որոնք արվեցին ի նպաստ Պրավդինի եւ Պադարինի։ Երկու անգամն էլ թատրոնում հաւաքվել էր բաւականաչափ ժողովուրդ, որը ծաղիկներով եւ ծափահարութիւններով վարձատրեց բէնէֆիցիանտներին եւ Եաբլօչկինային։

—

Ֆինանսների մինիստրութիւնը, ինչպէս յայտնի է, վճռել է՝ 1902 թուի յունվարի 3-ին երկրորդ խորհրդակցութիւն հրաւիրել առեւտրական կրթութեան հարցը քննելու համար։ Այդ անգամ, ի միջի այլ հարցերի, քննութեան կենթարկվի բարձրագոյն առեւտրական դպրոցներ հիմնելու հարցը։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են. «Պետերբուրգի լոյսից, կարծես դաշոյնի պաղ փայլը լինի։ Այսպիսի տրամադրութիւն յարուցանող մթնոլորտում զարմանալի է, որ Վենետիկը կարողացաւ հազար տարի տեւող կառավարութիւն ունենալ։ Վենետիկեան գիշերը տափանքի եւ ոճիրների գիշեր է. այս լուռ չէնքերն ու խաւար ջրանցքները հարաւի կրքոտ մարդուն կամ դէպի գաւադրութիւն կամ դէպի մեղկ հեշտութիւնները կը մղեն։

...Գոնդոլը սահում է ու սահում ոլոր մոլոր ջրանցքներով խաւար բարձր պատերի տակից, ուր դարերը ծածկում են Վենետիկի պատմութեան այնքան արիւնոտ անցքեր, այնքան սոսկալի ոճիրներ։ Առաւօտեան ժամի 3-ն է, եւ մենք մտնում ենք Վենետիկի ամենից խորհրդաւոր, ամենից հետաքրքիր ջրանցքը։ մեր գլխի վերեւ բարձրանում է այժմ «Հառաչանքի կամուրջը» եւ աջ ու ձախ վենետիկեան այն բանտերը, որոնց գաղտնիքը այս ջրերն ու քարերը գիտեն։

«Հառաչանքի կամուրջ»... սոսկալի եւ խորհրդաւոր անուն, որ այնքան շատ բան է ասում իր քար լռութեամբ։ Այստեղ է երգել Բայրոնը—«Վենետիկումն եմ, Հառաչանքի կամուրջի վրա. դէպի ձախ ես տեսնում եմ մի պալատ, դէպի աջ մի բանտ։ Այս չէնքերը դուրս են ցցված ալիքներից, որպէս մոգական գաւազանով։ Տաս դարեր փռում են իմ շուրջը իրանց ամպամած թեւերը եւ մի մեռնող փապ ժպտում է հեռու ժամանակներին» (Չայլդ-Հարօլդ երգ IV.)։

Դարձեալ ս. Մարկոսի հրապարակումն ենք։ Վենետիկի գիշերը երգ է, երազ...

Ա. Ահարոնեանց

Գալատներ, պալատներ... լայն ջրանքի աջ ու ձախ կողմերում ցցվում են ջրից դուրս մէկը միւսի ետեւից։ Երբ լուսինը լուսաւորում է նրանց ճակատները, ես տեսնում եմ այդ գեղեցիկ քանդակները, արձանները, տերեւաձեւ զարդերով պատշգամբները, նուրբ սիւները, լուսամուտներն իրանց գալարուն շրջանակներով, կամարները մասամբ սպիտակ եւ մասամբ թխացած ժամանակի երեսից։ Նաւավարը իմ ետեւից անդադար թուում է նրանց անունները, բայց ես վազուց է, որ այլ եւս չեմ լսում նրան եւ միայն նայում եմ, որովհետեւ այդ անունները միտ պահել անհնարին է եւ քանիսն են։ Ո՞ր դարին են պատկանում նրանք եւ ինչ ճարտարապետական ոճի, դժուար է ասել։ Գեղարուեստական մի զարմանալի խառնուրդ է ներկայացնում թէ իւրաքանչիւր պալատ առանձին վերցրած եւ թէ ամբողջը միասին։ Գոթական, արաբական, բիւզանդական ոճերի մի զարմանալի խճողումն է այս, որ առաջ է բերել մի առանձին վենետիկեան ոճ. գոռող հանրապետութիւնը իր կողոպտած երկիրների ճարտարապետական փառքերից աշխատել է մի դիւթական փունջ կազմել կաթնագոյն մարմարիոններով եւ այս ջրանցքը դարձրել է գեղարուեստական հրաշալիք։ Այս պալատներից իւրաքանչիւրն իր պատմութիւնն ունի։ Մերթ փառաւոր եւ մերթ ոճիրներով պղծված՝ քարացած անցեալն է, որ լուռ նայում է այս ջրերին, որպէս իր անցքերի միակ վկաներին եւ նրանց հետ միասին լուռ տխրութեամբ երազում է հին օրերը, որոնք էլ երբէք յետ գալու չեն։

Երկու կողմում չինութիւնների օրմերի վրա հաստատված լապտերները լոյսի մի մի սիւն են արձակում ջրի մէջ դէպի խորը, խորը եւ փոքրիկ ջրանցքներ. ես նայում եմ այդ ջրային փողոցներին, որոնք բաժանում են չէնքերն իրարից եւ նրանց խաւարի մէջ չը գիտեմ ինչ մի դաւադրական բան եմ զգում, եւ սակայն այնտեղ իշխող խորհրդաւորութիւնն ինձ գրաւում է։

—Նաւավար, ս. Մարկոս վերադառնալու համար մտնենք այս նեղ ջրանցքներից մէկը եւ պտոյտ գործենք. կարելի է։

Պատասխանի փոխարէն նա լռութեամբ ծռում է գոնդոլի ցռուկը, եւ մի րոպէից յետոյ մենք կորչում ենք խաւարի մէջ։ Այստեղ լապտերներ չը կան։ Այստեղ խաւարը եւ սոսկալի է եւ գրաւիչ. մոայլ վիշապ լինի կարծես այս ջրանցքը, որ իր բաց երախով քաշում է մեզ աւելի եւ աւելի ներս։ Երկու կողմից պատերն այնքան բարձր են, որ կորչում են վերեւում։ Նայում եմ եւ հազիւ եմ տեսնում երկնքի մի խղճուկ պատառ եւ նրա վրա քանի մի պլպլան աստղեր, որոնց լոյսն անզօր է թափանցել այս խորութեան մէջ, ուր խաւարն է իշխում եւ սարսափը։ Նաւակը յուզում է քնած ջրերը, ալեակները թեթեւ ճղփիւններով զարկվում են չէնքերի քարեայ հիմքերին, մենք անցնում ենք, եւ մեր ետեւում կրկին ամէն ինչ խորասուզվում է ճնշող հոգեկան լռութեան մէջ. միայն թիակն է մէկերպ բարձրանում եւ իջնում եւ թիավարն է ինչ որ երգ մռմռում քթի տակ։

Տեղ տեղ մտնում ենք ցածրիկ կամուրջների քարեայ մոայլ կամարների տակ եւ այդ ժամանակ մարդ անչափ մօտ է զգում իրան թագնված ոճիրը։ Ջրերի ցնցիւնը մութ կամարների տակ փոխվում եւ դառնում է իսկ եւ իսկ դաւադիրների փսփսուկ եւ ալեակների հնչին փայլը, որ առաջ է գալիս նաւակի լապտերի լոյսից, կարծես դաշոյնի պաղ փայլը լինի։ Այսպիսի տրամադրութիւն յարուցանող մթնոլորտում զարմանալի է, որ Վենետիկը կարողացաւ հազար տարի տեւող կառավարութիւն ունենալ։ Վենետիկեան գիշերը տափանքի եւ ոճիրների գիշեր է. այս լուռ չէնքերն ու խաւար ջրանցքները հարաւի կրքոտ մարդուն կամ դէպի գաւադրութիւն կամ դէպի մեղկ հեշտութիւնները կը մղեն։

...Գոնդոլը սահում է ու սահում ոլոր մոլոր ջրանցքներով խաւար բարձր պատերի տակից, ուր դարերը ծածկում են Վենետիկի պատմութեան այնքան արիւնոտ անցքեր, այնքան սոսկալի ոճիրներ։ Առաւօտեան ժամի 3-ն է, եւ մենք մտնում ենք Վենետիկի ամենից խորհրդաւոր, ամենից հետաքրքիր ջրանցքը։ մեր գլխի վերեւ բարձրանում է այժմ «Հառաչանքի կամուրջը» եւ աջ ու ձախ վենետիկեան այն բանտերը, որոնց գաղտնիքը այս ջրերն ու քարերը գիտեն։

«Հառաչանքի կամուրջ»... սոսկալի եւ խորհրդաւոր անուն, որ այնքան շատ բան է ասում իր քար լռութեամբ։ Այստեղ է երգել Բայրոնը—«Վենետիկումն եմ, Հառաչանքի կամուրջի վրա. դէպի ձախ ես տեսնում եմ մի պալատ, դէպի աջ մի բանտ։ Այս չէնքերը դուրս են ցցված ալիքներից, որպէս մոգական գաւազանով։ Տաս դարեր փռում են իմ շուրջը իրանց ամպամած թեւերը եւ մի մեռնող փապ ժպտում է հեռու ժամանակներին» (Չայլդ-Հարօլդ երգ IV.)։

Դարձեալ ս. Մարկոսի հրապարակումն ենք։ Վենետիկի գիշերը երգ է, երազ...

Ա. Ահարոնեանց

բուրգի հայերը սովորութիւն ունեն կիրակի օրերը պատարագի արարողութեան ներկայ գտնվել։ Միայն՝ աղօթելու փոխարէն, զրոյցներով են զբաղված, այն էլ այնքան բարձր ձայնով են խօսում, որ իրանց խօսակցութեան ակամայ ունկնդիր են դարձնում կողքին կանգնած ժամաւորներին եւ այդպիսով շատերի կրօնական զգացմունքներն են վրդովում։ Երէցփոխի պարտաւորութիւնն էր՝ ուշադրութիւն դարձնել եւ վերջ դնել եկեղեցում խօսելու այդ խայտառակ սովորութեան, քան թէ երեխաներին արգելել եւ չը թոյլ տալ քահանաների դասի յետեւում կանգնել, ինչպէս որ վերջին անգամ իրան թոյլ տուեց այդպիսի բան մեր երէցփոխը»։

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ մեզ գրում են. «Երէկ, յունիսի 22-ին, վախճանվեց եւ այսօր հողին յանձնվեց մեր քաղաքի ս. Վարդանանց եկեղեցու միաբան Գրիգոր աւագ քահանայ Վարդանեան։ Հանգուցեալը մօտ 100 տարեկան էր եւ արդէն 10 տարուց աւել էր, որ ծերութեան եւ տկարութեան պատճառով դադարել էր քահանայագործութիւնից։ Հանգուցեալ տէր-Գրիգորը վերջին քահանան էր, որ ձեռնադրված էր Կարինի եւ մեր Ախալցխայի հռչակաւոր գորը վերջին քահանան էր, որ ձեռնադրված էր Կարինի եւ մեր Ախալցխայի հռչակաւոր առաջնորդ՝ Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու ձեռքով։ Սկզբում ձեռնադրված էր Ազզոր գիւղի վրա եւ յետոյ տեղափոխվելով Ախալցխա, 50 տարուց աւել քահանայագործեց»։

—

ԶՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են. «Քաղաքային այգում նշանակված է չարաթական երեք անգամ պարերեկոյթ, որը գրաւում է խուռն բազմութիւն թէ տեղացիներից եւ թէ եկուորներից։ Նուագում են եւ տաղանդաւորները. ուրախ ու զուարճալի օրեր ենք անցկացնում»։

—

ԻԳԴԻՐԻՑ մեզ գրում են. «Ս. Սահակ եկեղեցում կիրակի, յունիսի 17-ին, մի խումբ երիտասարդներ, պատարագից յետոյ, հոգեհանգիստ կատարեցին հանգուցեալ տաղանդաւոր դերասան Պետրոս Ադամեանի մահվան տասնամեակի առիթով։ Եկեղեցում բազմութեան մեծամասնութիւնն էին կազմում տիկիններ եւ օրիորդներ։ Դիագարդի վրա դրվեց մի պսակ ծաղիկներով զարդարված եւ ժապաւէնի վրա գրված էր «տաղանդաւոր դերասան Պետրոս Ադամեանին»։ Խօսեց պ. Ա. Խաչատրեանցը եւ ծանօթացրեց հանգուցեալի կենսագրութեան հետ։»

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Հեղեղները անհետեւանք չը մնացին եւ Ախալքալաքի համար. մի հինգ խարխուլ տների պատեր փլվեցին։ Երկու խանութ փլվեցին հեղեղներից առաջ, մի արեւ օր։ Դրանցից մէկը բաւական ապրանք թողեց տակը։ Առհասարակ երկրաշարժից յետոյ շատ խարխուլ տներ կան Ախալքալաքում. պէտք է այս հանգամանքի վրա լուրջ ուշադրութիւն դարձնել, որ դժբաղդութիւններ չը պատահեն»։

—

ՊԱՐԻԶԻՑ մեզ գրում են. «Գ. Բաչինջաղեան իր՝ Պարիզի մէջ նկարած երեք մեծադիր պատկերը՝ ինչպէս են. 1) «Թամար թագուհու ամրոցը Դարիալի կիրճի մէջ», 2) «Ախուրեան գետը լուսնածագի պահուն» եւ 3) «Սեւանայ լիճը անձրեւի տակ» պիտի ուղարկէ մօտ օրերս Թիֆլիսի մէջ բացվելիք Կովկասեան ցուցահանդէսի գեղարուեստական բաժնին»։

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ մեզ գրում են. «Ինչպէս անցեալ տարի, այս տարի էլ, հինգշաբթի, յունիսի 21-ին, ս. Սահակի եւ Մեսրոպի տօնի օրը, տեղիս ոսկերիչ եւ արծաթագործ արհեստաւորները բոլորն էլ խանութները փակել էին եւ այդ տօնը յաւերժացնելու համար պատրաստել էին, պատարագից յետոյ, մի ասնաֆական ճաշ, որտեղ եղան տօնի առիթով այլ եւ այլ առաջարկներ եւ ճառախօսութիւններ»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, յունիսի 14-ին

Յունիսի 1-ին տեղիս Լիլաւա թաղի երկսեռ դպրոցների թէ ուսումնական եւ թէ տընտեսական մասի հաշուետուութեան օրն էր։ Այս երեք տարի շարունակաբար դպրոցների ուսումնական մասը ղեկավարել է տեսուչ պ. Տ. Ռաշմաճեան իր խմբով եւ այդ ժամանակամիջոցում տղայոց դպրոցը հասցրել է չորրորդ դասարանի, իսկ օրիորդաց դպրոցը երկրորդ դասարանի։ Ցանկութիւն կայ տղայոց դպրոցը հասցնել մինչեւ վեցերորդ դասարան, այսինքն միջնակարգ դպրոցի դասընթացքը, եթէ հոգաբարձութիւնը եւ խումբը շարունակեն նոյն եռանդով եւ կողմնակի նիւթական օժանդակութիւն ստանան, որովհետեւ, ինչպէս ներքեւում պիտի տեսնենք, եղած դրամագլխի տոկոսներով ոչ միայն միջնակարգ դպրոց, այլ մի ծխական դպրոց էլ անհնարին է կառավարել։

Ներկայ հոգաբարձութիւնը շարունակ վերընտրվել է եւ սրանով ահա տասնումէկ տարի է, որ այդ պաշտօնը վարում է. հիմա տեսնենք նիւթապէս ինչ վիճակի մէջ են եղել յիշեալ դպրոցները, երբ այս հոգաբարձութիւնը գործի է անցել եւ ինչ վիճակի մէջ է այժմ, երբ նոյն հոգաբարձութիւնը ցանկանում է ընդ միշտ հրաժարվել այդ պաշտօնը վարելուց։

1890 թուից յետոյ, երբ ներկայ հոգաբարձութիւնը պաշտօն ստանձնեց, նախորդ հոգաբարձութիւնից իրբեւ դպրոցների դրամագլուխ ստացել է 384 դրան 40 կոպէկ (որ ռուսաց փողով անում է մօտաւորապէս 76 բուբլի)։

Իր պաշտօնավարութեան առաջին տարին, այն է 1890—91 թ., զանազան նուիրատուութիւններով, հանգանակութիւններով հոգաբարձութիւնը հասցրել է այդ գումարը 22,066 դրան 97½ կոպէկի, որից ծախս եղել է 4258 դրան. հետեւեալ 91—92 թուին 21,774 դր. 32½ պահելով իբրեւ դրամագլուխ, տոկոսներով եւ այլ միջոցներով կառավարել են դպրոցը, ծախսելով 5237 դր. 57½ կոպէկ։ Այդպէս շարունակելով, այս վերջացած 1900—1901 թուականին դպրոցները ունէին 53,602 դրան 80 կոպէկ դրամագլուխ եւ ծախս 34,600 դրան։

Դուք տեսնում էք, որ 11 տարվայ ընթացքում հոգաբարձութիւնը բարեխղճօրէն վարելով գործը, ոչ միայն դպրոցի համար ստեղծել է ոչնչից մի պատկառելի դրամագլուխ 53,602 դր., որ ռուսաց փողով անում է մօտաւորապէս 11,000 բուբլի, այլ եւ դպրոցը հասցրել է մի նախանձելի վիճակի, բաւարարութիւն տալով 13 հոգուց բաղկացած ուսուցչական խմբին, ծախսելով 34,600 դրան, որ ռուսաց փողով անում է մօտաւորապէս 7000 բուբլի։

Հոգաբարձուներից մանաւանդ առանձին եռանդով աշխատել է պ. Բ. Մելիք-Սարգսեան, որը ամեն տարի շրջում է Կովկաս եւ դպրոցի համար նպաստ հաւաքում։

Ներկայ տարին, որովհետեւ նոյն հոգաբարձուների պաշտօնավարութեան ժամանակը լրացել է, հաշիւը ներկայացնելուց յետոյ նրանք դրեցին իրանց հրաժարականը, միաժամանակ խնդրելով ժողովրդից, որ այլ եւս իրանց ընտրելու նեղութիւնը չը քաշեն, որովհետեւ իրանք յոգնել են եւ ուզում են հանգստանալ։ Սակայն իրօք այդ հրաժարականը ոչ թէ յոգնածութեան, այլ մի քանի ապերախտ եւ չարախօս լեզուների բամբասանքներից առաջացած վիրաւորանքի արդիւնք էր։ Յուսահատութիւնը պատիւ չէ բերում. թող չար լեզուները տարածեն ինչ ուզում են, այդ լեզուներից աւելի պերճախօս է աղնիւ գործը։

Անցեալ կիրակի, ինչպէս յայտնի է «Մշակի» ընթերցողներին, նոր հոգաբարձական ընտրութիւն եղաւ։

Ընտրութիւնից յետոյ Լիլաւա թաղի առաջաւոր մարդկանցից մի ժողով կայացաւ, որը 20 հոգուց բաղկացած մէկ պատգամաւորութիւն ընտրեց, որպէս զի ներկայանան հոգաբարձութեան եւ յայտնեն թէ «ժողովականները ուզում են դպրոցը բարձրացած տեսնել, իսկ իսկ այդ ուրիշ ոչ ոք չէ կարող անել, բացի այժմեան հոգաբարձուներից, ինչպէս այդ ցոյց տուեց մանաւանդ այս վերջին երեք տարվայ գործունէութիւնը, ուստի եւ խնդրում են չը մերժել ժողովրդի խնդիրը, որը պատրաստ է աջակցել այս տարի, հաւաքելով իր միջից դպրոցին նպաստ 1500 թուման (մօտ 3000 բուբլի)»։ Հոգաբարձութիւնը խոստացել է առաջիկայ ուրբաթ պատասխանել ժողովրդին։ Յուսով ենք, որ այդ պատասխանը բացասական չի լինի, եւ հոգաբարձութիւնը քաջալերվելով ժողովրդի դէպի իրան ունեցած վստահութիւնից եւ հաւատից, կաշխատէ աւելի եռանդուն կերպով նրա օգտին ծառայել եւ արդարացնել իր վրա դրած յոյսերը։

Վերջացնելով խօսքս, կուզէի խնդրել Կովկասի հայ ժողովրդի կարող անձերից, որ չը զբաղանային իրանց այժի համեմատ օգնել նիւթական նպաստներով յիշեալ դպրոցներին, որոնք առաջիկայ տարում կունենան տղաների հինգերորդ դասարան, ապագայում վեցերորդ եւ այսպիսով պարսկահայերիս համար պատրաստած կը լինենք մի վայր, որտեղից կը դուրս գան մեր ազգի պիտանի եւ զարգացած անհատներ։

Գ. Խաչատրեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«С. Пет. Вѣд.», վերցնելով արտասահմանի լրագիրներից, հաղորդում է, թէ քիւրդերը, շէյխ Բերազլի-Հուսէյնի առաջնորդութեամբ, աւերել են Բիթլիսի Բարիս եւ Սուրիա գիւղերը։ Մերերին ու պառաւներին կոտորել են, իսկ մնացածներին քշել են Դէրսիմի սարերը։ Եղջիւրաւոր անասունները եւ տնային իրերը չէյխը բաժանել է իր զինակիցներին իբր աւար։

—Բոլգարական զինուորական մինիստրի օրգան «Տելեգրաֆ»-ը հաղորդում է Կ. Պոլսից Սոֆիա եկած մի բոլգար պատանու հետեւեալ պատմութիւնը, «Մազերս ցից-ցից են կանգնում, երբ յիշում եմ այն բաները, ինչ որ Կ. Պոլսի ոստիկանութիւնը անում է բոլգարների հետ... Գրեթէ ամեն օր Կ. Պոլիս են բերում շղթայակապ բոլգարներ Սոլունից, Բիտոլիայից եւ Ադրիանուպոլսից եւ, ենթարկելով նրանց ամենադաժան տանջանքների, գցում են նրանց Կ. Պոլսի բանտերի մռայլ ու խոնաւ զնդանները, որտեղից նրանց այլ եւս վիճակված չէ լոյս աշխարհ դուրս գալ... միջնադարեան ինքնուիզիցիական տանջանքները նորից գործադրութիւն են գտել Կ. Պոլսի զնդաններում,— գլխի վայր կախ տալը, եղունգների տակ մեխեր խրելը, բանտարկեալի խցի մէջ օդի տաքութիւնը անտանելի չափի հասցնելը եւ այլն այդպիսի տանջանքներ մեղմ պատիժներ են համարվում բոլգար կալանաւորների համար... Բոլոր բանտերի ու զնդանների լցուածութեան պատճառով այժմ սկսել են բոլգարներին փակել՝ Ոսկեղջիւրի ջրերում արդէն տասը տարուց աւելի խարիսխ գցած եւ լողալու անպէտք թիւրքական չոգենաւերի խորքում։ Բայց ամենասարսափելին թիւրքական այդ գազանութիւններից այն է, որ բոլգար կալանաւորներից շատերը զոհ են գնում Ոսկեղջիւրի ալիքներին... այո, ես պնդում եմ այդ եւ խնդրում եմ հաւատալ խօսքիս, որովհետեւ Կ. Պոլսում ապրող բոլոր բոլգարներին յայտնի է, որ եթէ դատարանը մահվան պատժի կամ տաժանակիր աշխատանքների է ենթարկում 5—10 բոլգարների, կը նշանակի, որ դրանցից հինգ կամ տասնգամ աւելի մեծ թիւով թշուառների դիշերը խեղդում են ծովում... այդ փաստը կը հաւատէ ձեզ իւրաքանչիւր պոլսաբնակ բոլգար»...

—Բոլգարացի եւ մակեդոնացի կանանց երեք ընկերութիւնների նախաձեռնութեամբ, «կանանց հաւասարհային խաղաղասիրական դաշնակցութիւնը», իշխանուհի Վիշնեվսկայի նախագահութեամբ, ժողով կազմեց Պարիզում յունիսի 14-ին (27-ին) յօգուտ մակեդոնական հարցի խաղաղ լուծման։

—Սղերտից «Սերվէթ» լրագրին գրում են, որ բազմաթիւ հայեր եւ նէստորականներ ամբողջ ընտանիքներով մահմեդականութիւն ընդունեցին։

—«Temps» լրագիրը հաղորդում է, որ Ցէպինիէից ստացված տեղեկութիւնների համեմատ, մահմեդականները յարձակում գործեցին քրիստոնեաների վրա Հուսէնիէի շրջականերում։ Եօթը քրիստոնեաներ սպանվեցին եւ մի քանի մարդիկ վիրաւորվեցին։ Այդտեղի ամբողջ քրիստոնեայ ազգաբնակութիւնը մեծ երկիւղի մէջ է։

—Անգլիական մամուլը շատ յուզված է Միջերկրական ծովի անգլիական նաւատորմի հրամանատար Բերեսֆորդի նամակից։ Այդ նամակի մէջ ծովապետը գանգատվում է այն բանի վրա, որ անգլիական նաւատորմը Միջերկրական ծովում կենտրոնացած ֆրանսիական ծովային ոյժերից աւելի ստոր է եւ պատերազմական պարաստութիւն չունի։ Այդ նամակը հայրենասիրական մի շարք երկիւղներ յարուցեց անգլիական մամուլի մէջ։ Բայց ամենից շատ աղմուկ յարուցեց բրիտանական ծովային լիգայի այն յայտարարութիւնը, թէ մինիստրութիւնը խաբել է նրա վստահութիւնը։ Ծովային լիգան իզուր սպասում էր մի քանի ամիս, որ մինիստրութիւնը կը ցոյց տայ իր գործունէութիւնը, բայց քանի որ մինչեւ այժմ ոչինչ չէ արված՝ սխալները ուղղելու համար, այդ պատճառով ծովային լիգան իր պարտքն է համարում բանալ անգլիական ժողովրդի աչքերը գործերի դրութեան վրա։ Այդ լիգայի խօսքով, Անգլիան իր նաւատորմով յետ է մնացել ուրիշ պետութիւններից։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

25 յունիսի

ԽԱՐԿՕՎ։ Ալէքսէեվսկօե լեռնարդիւնաբերական ընկերութիւնը ստացաւ անցեալ տարվայ համար զուտ արդիւնք 431,686 բուբլի։ Պետական բանկը տալիս է առաջին գրաւականով ընկերութեան շարժական կայքի համար վեց միլիոն։ Դիրեկտորներ ընտրված են՝ Դ. Ա. Ալէքսէվսկի, Բօբիրէվ եւ Կրիչէվսկի։

ԿՈՒՐԳԱՆ։ Սաստիկ շոքեր են. խոտերը այրվեցին. ցորենը անձրեւի կարիք ունի։

ՄՕՍԿՎԱ։ Այսօրվայ համառուսական Դէրբի ձիարշաւում 41,500 ր. պարգեւ ստացաւ Ռէշկէի գործատան «Լէաօրսիէ» ձին. Կայսերական 12,050 ր. պարգեւ ստացաւ Կրասնոկի գործարանի «Պիկվիկ» ձին. տէրը Ռէշկէն է։

Կ. ՊՕԼԻՍ։ Խէդիվը ժամանեց այստեղ եւ գնաց Իլդիզ-Քիոսկ յայտնելու սուլթանին իր անձնուիրութիւնը։

ՍՕՖԻԱ։ Պրօկուրօրը մեղադրանք է յարուցանում մակեդոնացի Սէրաֆովի եւ նրա ընկերոջ դէմ սպանութիւններին մասնակցելու համար Բուխարէստում։ Դադարեցրած է Կարլ թագաւորի կեանքի դէմ դաւադրութեան գործը։ Քննութիւնը երեւի կը սկսվի օգոստոսի սկզբին։

Կ. ՊՕԼԻՍ։ Որովհետեւ Գեբիրչէվոի մօտ կարանտինը տարածվում է «օրիանտ-էքսպրէս» գնացքով եկողների վրա եւս, այդ պատճառով վաղվան օրից այդ գնացքը դադարեցնում է իր երթեւեկութիւնը։

ՍՎԻՆԷՄԻՒՆԴԷ։ Կայսրը «Հօհէնցօլէրն» նաւով ճանապարհ ընկաւ հիւսիսային ջրերը։

ՏԱՆԺԷՐ։ Հէնց նոր վերջացած տեղական կրօնական տօնախմբութիւնների ժամանակ երեք եւրոպացիներ քարկոծվեցին տեղացիների կողմից։ Ազգաբնակութիւնը միաձայն յոյս է յայտնում, որ Տանժէրում, դիպլոմատիական մարմնի ռէզիդէնցիայում, պետութիւնների ներկայացուցիչներին կաջողվի արգելել կրօնական հանդէսները։

ԵԴԷՆԲՈՒՐԳ։ Բրիտանական զօրաբաժինը յունիսի 22-ին Եդէնբուրգի մօտ յանկարծակի վրա հասաւ բօէրական զօրաբաժնին։ 15 բօէրներ, որոնց թւում եւ նրանց հրամանատար Բարլոյզէն, զինաթափ եղան։

ՐԱԳԱՑ։ Հօհէնլօէի մարմնի փոխադրութիւնը տեղի կունենայ վաղը. մարմինը կը թաղվի Շիլլէնհօֆֆիւրստում, իշխանուհի Հօհէնլօէի մարմնի կողքին։ Իշխան Հօհենլօէ թողել է յիշողութիւններ, բայց չէր ցանկանում, որ նրանք հրատարակվէին իսկոյն նրա մահից յետոյ։

ՕԴԷՍԱ։ Յունիսի 24-ին, երեկոյեան, Օդէսայի վաճառականութիւնը արժանացաւ Մեծ Իշխան Ալէքսանդր Միխայլովիչին իր մօտ ընդունելու պատիւն։ Մեծ Հիւրին ընդունելը եւ ճաշը, որ տրվեց Նորին Բարձրութեանը նոր բորսայի շինութեան մէջ, պատշաճաւոր հանդիսաւորութեամբ էր սարքված։ Ամբողջ շինութիւնը թաղված էր կանաչի, ծաղիկների, ծաղկափունջերի եւ տրօպիքական բոյսերի մէջ։ Էստրադայի վրա, բազմաթիւ կանաչի եւ կենդանի ծաղիկների մէջ, փայլում էր Նորին Մեծութեան կիսարձանը։ Գիշերվայ տասն եւ մէկ ժամին Նորին Բարձրութիւնը ճանապարհ ընկաւ «Բոստիալով» զրահակիր նաւով։

ԽԱՐԿՕՎ։ Անցեալ գիշերը 1-ին քաղաքային պօստ-հեռագրատան բաժանմունքի մէջ դրամական ծրարների գողութիւն է կատարված մօտ 7000 բուբլ գումարի։ Գողը մտել է շինութիւնը, կոտրել է երկու կողպէքները, որոնցով փակված էր փողի սնդուկը, եւ անարգել տարել է ծրարները. կասկածվում է պահապանը։

26 յունիսի

ԼՕՆԴՕՆ։ Հաւայնքների ժողովում զինուորական մինիստրութեան ֆինանսական քարտուղար Ստէնդի հաղորդեց, որ վերջին չորս ամիսներում ընդհանրապէս մօտ 8000 բօէրներ սպանվել են, վիրաւորվել եւ գերի ընկել. այդ ժամանակում հարաւային Աֆրիկայում գտնվում էին միջին թւով 251,000 բրիտանական զօրքեր, որոնց թւում եւ 14,000 հիւանդներ։

ԼՕՆԴՕՆ։ Լորդ Բոզբէրի ունկնդրութիւն ունէր թագաւորի մօտ, որը տեւեց մէկ ամբողջ ժամ։ Մանրամասնութիւնները յայտնի չեն, բայց, ըստ երեւոյթին, այդ ունկնդրութիւնը քաղաքական նշանակութիւն չունի։

ԼՕՆԴՕՆ։ Երեկոյեան լրագիրները հաղորդում են, որ բօէրական հրամանատար Շէպէրս մտաւ Մուրրէյբուրգ, ուր բերդապահ զօրք չը կայ, եւ այրեց բոլոր հասարակական եւ զանազան մասնաւոր շինութիւնները։

ՄԱՐՍԷԼ։ Հեռու Արեւելքից եկած պօստային «Լաօս» շոգենաւի վրա մի հնոցապան արաբ վարակվեց ժանտախտով։ Պօրտ-Սաիդի եւ Մարսէլի միջեւ հիւանդանալու 15 դէպքեր կային հնոցապանների միջեւ։ Ֆրիուլէ նրանց տփ իջեցնելու ժամանակից մէկը մեռաւ երէկ երեկոյեան, միւսը—այսօր առաւօտեան։ Ճանապարհորդները եւ նաւի վրա ծառայողների մնացած մասը առողջ են։ Երէկվայ օրվայ ընթացքում սանիտարական իշխանութիւնները բոլոր միջոցները գործ դրին՝ Ֆրիուլէում տե-

զաւորելու համար բոլոր ճանապարհորդներին, թիւով 317։ Նրանք բոլորն էլ այսօր ափ կիջեցնվեն։ Երէկվանից բժիշկներ են ուղարկված այնտեղ։ Տասնօրեայ կարանտին է նշանակված, բայց եթէ հիւանդանալու նոր դէպքեր լինեն, նա կերկարացնվի։

ԲՈՒԽԱՐԷՍՏ։ Կ. Պոլսում ժանտախտով հիւանդանալու նոր դէպքերի պատճառով, կարանտինը Սուլինում մեծացրված է մինչեւ վեց օր։ Կոնստանցա եւ Մանգալիա նաւահանգիստները փակված են։ Նաւերի երթեւեկութիւնը Ռումինիայից դէպի Կ. Պոլիս բոլորովին դադարեցրված է։

ԼԷՅՊՑԻԳ։ Լէյպցիգի բանկի վերաստուգող խորհրդի Նիւ-Եորկից երէկ վերադարձած նախագահ, քաղաքային խորհրդի անդամ եւ աւստրօ-ունգարական հիւպատոս Դոդէլ ձերբակալված է պրոկուրորի կարգադրութեամբ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա. Վօրոնցօվի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վենէրական («տիֆիլիս») և միզասեռ. հիւանդ.
Ն. Մ. Զիկօվանցի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Ն. Ի. Գզելիեվ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Զ. Ի. Բարանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ն. Ն. Ռոսսոմբէկով—6—7 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.
Գ. Ա. Թարխանով—7—8 ժ. ներքին և երեխայոց հ. ծաղիկ է կորուս նոյնպէս և կիրակի, առաւօտեան ժամի 9—10.
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Տ. Առվանիթակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլատրութեամբ։ Մեծ արկղիկը 5 ռուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու եւ ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց

ՁՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն եւ սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մունները, տալիս է կաշուին քնքշութիւն եւ սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 ռուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական եւ դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երեւանեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց եւ Բագումի. նաեւ Միքայէլեան կամուրջի վրա, Պապովի եւ Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պօստով։ 32—100

ՈՒՐԱՆԻԱ

Աստղաբաշխական վէպ

Ֆրանսերէնից թարգմ. Հ. Առաքելեան

Գինն է 1 ր. 50 կ.

Դիմել՝ Книжный магазинъ Гуттенбергъ. Лорисъ-Меликовская, № 11, Г. Галустяну. Նոյն տեղը վաճառվում են նոր լոյս տեսած եւ այլ ամեն տեսակ գրքեր։

5—5

ԹԻՖԼԻՍԻ ԱՄԱՐԱՑԻՆ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Զորեքշաբթի, յունիսի 27-ին,

Հայ դերասանական ընկերութեան անդամները կը ներկայացնեն

1. «ՄԻԿԻԶԻ ՀԵՐՍԵՆԻՔԸ»

Վոդ. 1 գործ. հեղ. Ա. Երէլեանի

2. «ՄԻՆՉ ԴԱՏԱՎՃԻՌԸ»

Մօնոլոգ մէկ պատկերով

3. ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

Վոդ. 1 գործ. թարգմ. Աւետեանի։

Սկիզբն է ուղիղ 9 ժամին երեկոյեան։

Տոմսակները ծախվում են այդուամբ։

1—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտնում է, որ նրա սահմանում յուլիսի 2-ին, ցերեկվայ 1 ժամին, նշանակված է աճուրդ դէզինֆէկցիական կամէրային կից երկու սենեակներ կառուցանելու համար 1378 ր. 63 կոպէկ գումարի։

Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանները Վարչութեան Շինարարական բաժնում բոլոր լի օրերը ցերեկվայ 9 ժամից մինչեւ 2 ժամը։

1—3

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

համար հարկաւոր են երկու ուսուցիչ, մէկը, որ աւանդելու է դպրոցական դասարաններում բնական պատմութեան 8, բնագիտութեան 7 դաս, իսկ պատրաստականներում թուաբանութեան 11 դաս 1320 ր. ռոճկով, լինելու է համալսարանաւարտ բնագէտ կամ մաթեմատիկոս. միւսը, որ աւանդելու է պատրաստականներում ռուսաց լեզուի 18 դաս, 720 ր. ռոճիկով, պէտք է լինի ուսուցչական ճեմարանը (учительскій институтъ) աւարտած կամ պատշաճաւոր վկայական ունեցող լրաւատէր ուսուցիչ։ Ցանկացողները թող դիմեն въ Нахичевань на-Дону, Ректору Семинаріи, Г. Чарихьяну.

Տեսուչ դպրանոցի պետական խորհրդական
Գ. Զարիխեան

(չ. շ.) 6—6

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, որ իր սահմանում ներկայ տարվայ յունիսի 28-ին, ցերեկվայ ժամը 1-ին, նշանակված է աճուրդ պատրաստելու համար, վիմագրական եղանակով, 63 գնահատական պլանչէտներ 1475 ռուբլի գումարի։ Աճուրդին մասնակցել ցանկացողները պայմանները կարող են տեսնել Վարչութեան շինարարական բաժնում բոլոր լի օրերը, առաւօտեան ժամը 9-ից մինչեւ ցերեկվայ ժամը 2-ը։

2—3

ՄԱՑԿՕՊԻ ՀԱՅՈՑ ԱՂՕԹԱՏԱՆ ՀԱՄԱՐ

ՀԱՐԿԱՒՈՐ Է

մի ձայնաւոր եւ իր պաշտօնին հմուտ տիրացու։ Ցանկալի է, որ լինէր ամուրի։ Տարեկան կը ստանայ երկու հարիւր քառասուն ռուբլի ռոճիկ եւ մինչեւ հարիւր վաթսուն ռուբլի արդիւնք։

Դիմել՝ Майкопъ (Куб. Обл.), армянскому ктитору Макару Б. Іерзіеву.

Երէցփոխ Մ. Թէրզեան

2—2

Արդանուշի միդասեան երկսեռ եկեղեցական ծխական ուսումնարանի համար

ՀԱՐԿԱՒՈՐ Է

ցէնզաւոր ուսուցիչ, որը պէտք է գիտենայ եւ երգեցիկ խումբ կազմել՝ եկեղեցում երգելու համար։ Պայմանների մասին կարող են դիմել՝ Թիֆլիս, գրախանութ «Գուտենբէրգ», Լօրիս-Մելիքեան փողոց, № 11։ 2—4

29—33 (Ն.)

ՎԱՐԶՈՒԹԻՒՆԸ

ՁԱՏՄԱ

Նաւթարդիւնաբերական ընկերութեան,

որ հիմնված է Թիֆլիս քաղաքում նաւթ քաշելու համար ՁԱՏՄԱ տեղում, Պօլի կայարանին մօտ, սրանով յայտարարում է, որ ընկերութեան կազմի մէջ որպէս ընկեր-փայատէրեր մտնել ցանկացող անձինք, կարող են ձեռք բերել ընկերութեան հարիւր ռուբլ անուանական արժողութեան փայեր, պարբերաբար վճարներ մտցնելով, ամեն անգամ ոչ աւելի փայի արժողութեան 15%-ից։ Առաջին վճարը տրվում է ժամանակաւոր անդորրագրի տակ ստորագրվելու ժամանակ. հետեւեալ վճարները մտցնելու ժամանակամիջոցը կախված է փայատէրերի ընդհանուր ժողովից։ Ստորագրութիւնն ընդունվում է. 1) ընկերութեան վարչութեան մէջ Նախագահ ինժենէր Կ. Ց. Բուտկեվիչի մօտ (Նիկոլաեվսկայա 35), 2) «ՁԱՏՄԱ» ընկերութեան գրասենեակում, ցերեկվայ 8-ից մինչեւ 1 ժամը եւ երեկոյեան 6-ից մինչեւ 9 ժամը (Սերգիեվսկայա եւ Սօլօլակսկայա փողոցների անկիւն, տուն Միրզոեվի, տելեֆոն № 427), 3) «Другъ» ընկերութեան գրասենեակում (Բարօնսկայա № 10) եւ 4) Ր. Մուլեարսկիի գրասենեակում, Երեւանեան հրապարակ, «Ֆրանցիա» հիւրանոցի տակ։ (չ. շ.) 1—2

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԼԷՕ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԿԵԱՆՔԸ, ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՆՑԵԱԼՈՒՄ

Հատոր առաջին։—XVI—XVII դար

ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ 50 ԿՈՊԷԿ

Ծախվում է Թիֆլիսում, «Մշակի» խմբագրատանը.

Օտարաքաղաքացիները դիմում են. Тифлисъ, редакція «Мшакъ». 5—10

ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՆ

հրաւիրում է խմբի անդամներին, տիկիններին, օրիորդներին եւ պարոններին շնորհ բերել իր մօտ երեքշաբթի, յուլիսի 10-ին, երեկոյեան ժամը 6-ին, առաջիկայ Կովկասեան ցուցահանդէսին սեպտեմբերի 1-ից մինչեւ նոյեմբերի 1-ը երեսուն հատերգ երգելու համար խումբ եւ ծրագիր կազմելու։ Ընդունվում են նոր անձինք եւս։ Тифлисъ, Мухранская улица, д. Мухранскаго. 2—5

Լոյս տեսաւ

Ա. Լալայեանի

ԱԼԲՕՄ

Կարս քաղաքի եւ նրա շրջանի տեսարանների (Կարս, Սարիղամիշ, Արդահան, Խնծկոնք, Մաղասու բերդ, Անի, Բագնայր, Հոռոմոս, Զրիլու. ընդամենը 32 նկար)։

Գինն է 1 ր. 50 կ. ճանապարհածախսով։

Դիմել՝ А. Лалаянцу. Карсъ. 6—10

ԳՈՒՏՏԵՆԲԷՐԳ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ

վաճառվում է

ԱՏԱՄՆԵՐԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Աշխատ. դոկտոր Մ. Իւթիւճեանի

Գինն է 25 կոպ.

Նոյն տեղից կարելի է ձեռք բերել նոր լոյս տեսած եւ այլ ամեն տեսակ գրքեր։ Գումարով գնողներին զիջումով։

Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ „Гуттенбергъ“ (Лорисъ-Меликовская улица, № 11), Г. Галустяну. 5—5

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առեւտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առեւտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատտեստատներ։

Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առեւտրական Տնտեսութիւն, 2) Առեւտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն հատրիչի վրա, 5) Առեւտրական թղթակցութիւն, 6) Առեւտրական և տուրհակ կանոնադրութիւն և 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Փրիդօնովի տանը № 9, Սերգիեվսկայա և Լերմօնտովսկայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրի ապէս եղբ. Յովհաննէսների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу. (չ. շ.) 5—25

Կօնֆէկտի եւ շօկօլադի գործարան

„Փ. Ն. ՓՐԻԴՕՆԵԱՆ“

ԹԻՖԼԻՍՈՒՄ

Յայտնում է, որ իր գործարանում պատրաստվում են չաքարեղէնների ամեն տեսակ արտադրութիւններ, որոնք թէ իրանց յատկութեամբ, մաքրութեամբ եւ թէ մատչելի գներով մրցում են Ռուսաստանի առաջնակարգ գործարանների արտադրութիւնների հետ։

Պատրաստում ենք՝ կարամէլ մրգեղէնից (фруктовая карамель), կարամէլ լցված (съ начинкою), մարմէլադ (пастила), զէֆիր (зефиръ), դրաժէ (драже), քիրվա-չաքար (պաղ-չաքար, леденецъ)։

Գործարանում աշխատում են հմուտ վարպետներ՝ մայրաքաղաքից հրաւիրված յայտնի վարպետի հսկողութեան տակ։

Պատուէրները կատարվում են անմիջապէս եւ ճշդութեամբ։

Պրէյս-կուրանտը ուղարկվում է ցանկացողներին ձրի։

Պատուէրների համար դիմել՝ Тифлисъ, Нахаловка, Павловская улица, собственный домъ, № 12.

Թիֆլիսում մեր գործարանի արտադրութիւնները ծախվում են հետեւեալ մագազիններում—Գ. Բայեանդուրեանի, Գ. Ս. Տէր-Սիմոնեանի, Զ. Ի. Սուլխանեանի, Զ. Գ. Պոպովի, Եղբ. Ս. Ի. Մ. Աբրահամովների, Հաջի-Ռահմանովի պարկական մագազինում, Պետրի իտալական մագազինում եւ այլն։ Տելեֆոն № 362։

42—100

Дозволено цензурою, Тифлисъ, 26 Іюня 1901 г.

Электропечатня Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 72.